ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Ս.թ. օգոստոսի 30-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հանրային քննարկման է ներկայացվել ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հաշվի առնելով, որ նախատեսվում են փոփոխություններ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում, անհրաժեշտ է անդրադառնալ դրա նաև այլ թերություններին և կատարել համապատասխան փոփոխություններ: Ստորև ներկայացվում են ԹԻՀԿ առաջարկությունները գործող օրենքի վերաբերյալ.

1. «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնադրամը պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում:

Կարծում ենք, հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները հրապարակելու պարտավորությունը խախտում է մարդու անձնական տվյալների պաշտպանության և գործարար գաղտնիության իրավաչափ պաշտպանության իրավունքը: Մասնավորապես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է համաչափության սկզբունքի պահպանության պահանջը, համաձայն որի՝ անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար: Տվյալ դեպքում հասկանալի չէ, թե ինչ նպատակ է հետապնդում հիմնադրամի աշխատակազմում որևէ անձի ընդգրկված լինելու մասին տեղեկատվության հրապարակումը: Այն դեպքում, եթե հիմնադրամի միջոցներից օգտված հոգաբարձուների խորհրդի անդամների, ինչպես նաև կառավարչի անունների հրապարակումը հնարավոր է իրավաչափ համարել, քանի որ նրանք համարվում են որոշում կայացնող մարմիններ, ապա աշխատակիցների անունների հրապարակումը (առավել ևս՝ առանց նրանց նախնական

համաձայնության) հիմնավորված չէ և կարող է իրենց անձնական տվյալների գաղտնիության իրավունքի խախտում համարվել:

Աշխատակիցների անունների հրապարակման հանրային կարևորությունը պետք է հավասարակշռության մեջ լինի նրանց մասնավոր կյանքի իրավունքի հետ: Մինչդեռ հասկանալի չէ, թե ինչու են հիմնադրամների աշխատակիցների անուն, ազգանունների վերաբերյալ տեղեկությունները հանրային կարևորություն ներկայացնում, երբ որևէ այլ կազմակերպության աշխատակիցների համար նման պահանջ սահմանված չէ: Ավելացնենք նաև, որ Եվրոպայի խորհրդի «Եվրոպայում ոչ պետական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ» հանձնարարականի CM/Rec(2007)14 առաջարկությունների 64-րդ կետի համաձայն, հաշվետվողականության բոլոր պահանջներում պետք է պահպանվի դոնորների, շահառուների և աշխատակիցների իրավունքները հարգելու պարտավորությունը, ինչպես նաև գործարար գաղտնիության իրավաչափ պաշտպանության իրավունքը:

Կարծում ենք, որ հիմնադրամի գործունեության թափանցիկության ապահովման համար բավարար է ներկայացնել հիմնադրամում աշխատող վարձու աշխատակիցների քանակը:

Առաջարկություն. «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ հիմնադրամը պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը:

Հայաստան, Երևան, 0002, Մարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689 • Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am